

## Ե.— ՎԱՅՐԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԵՒ ԹՈՉՈՒՆՆԵՐ

Կիւրիինի վայրի անասուններուն մէջ, արջը առաջին տեղը կը զբաւէր : Անոնք բնակութիւն հաստատած էին Շուղուլի ծովէն մինչեւ Ինճէ Սու գիւղն հասնող խոր ու նեղ կիրճին մէջ, որուն կեդրոնէն հոսող գետին երկու եզերքները բազմաթիւ քարայրներ կային, որոնք սքանչելի ապաստանարաններ էին անոնց համար, մարդոց անմատչելի : Բնութեան ներդրածութեամբ, զիրենք չըջապատող դորշ ապառաժներուն գոյնն ստացած են : Շատ գիրուկ եւ բրդոտ՝ զուարակի մը մեծութիւնն ունին : Ամբողջ ձմեռը թմրութեամբ անցընելէ ետք՝ Մայիսի կէսին եւ Յունիս ամսուն, երբ Կիւրիինի պարտէզներուն թութերը կը սկսին հասնիլ՝ արջերը զիշեր ատեն քաղաք կ'իջնեն, իրենց այս չափազանց սիրելի պտուղը վայելելու : Աներկիւղ ծառը բարձրանալով կը թօթուեն ճիւղերը եւ լուսնի լոյսով կ'արժէ տեսնել զիրենք եւ իրենց ձագուկներուն մըրցումը, որոնք բուրդի մէջ ծրարուած խոշոր գնդակներու կը նմանին եւ զիրար գլորելով ազահարար կ'ուտեն քաղցր ու համեղ թութը :

Անոնք համարձակ եւ անվախ շատ անգամ ցերեկն եւս՝ իրենց փոքրիկները թողելով առանձին, քաղաք կ'իջնեն : Անգամ մը արջ մը հայ մանուկ մը յափշտակած կռնակն առնելով թէրգէ Տէտ ըստուած լեռն ի վեր կը տանի եղեր, երբ վրայ հասնելով աղատած են մանուկը : Տղուն կռնակին սակայն այնպէս հարուած մը տուած էր որ, տարիներ յետոյ դեռ թաթին տեղը յայտնի էր :

Արջերուն մորթը Կիւրիինի նման ցուրտ երկրի մը համար լաւագոյն մուշտակը կ'ըլլար, եթէ դեռ ձմրան քունի չգացած, աշնան վերջի ամսուն ձեռք ձգել յաջողէին զանոնք :

Արջէն յետոյ կու գայ գայլը : Հագիւ ձիւնը գետինը ծածկած՝ անոնք վոհմակով երեւան կու դան : Թէ՛ քաղաքին եւ թէ՛ գիւղերուն պատուհասն են : Քաղաքի հովիւները, որ ձմեռուան սաստկութեան համար հագիւ թէ ամիս մը միայն կրնան հօտերը դուրս հանել՝ ստիպուած են իրենց հետ անբաժան պահել գամփո մը՝ վիղը սրածայր երկաթներով օղակ մը (թօխա) անցուած, պաշտպանուելու համար գայլէն, որ սովորաբար շանը վզին կը նետուի առաջին հերթին : Թուրքիոյ ներքին դաւաճներու գայլերը խոշոր են եւ վայրազ, անոնց ժանիքները մատնաչափէն աւելի երկարութիւն ունին, շատ անգամ ճամբորդներու վրայ յարձակելու իսկ կը յանդգնին : Անոնք երբեմն Կիւրիինի շուկան իջնելով, զիշեր ատեն, թափառական շուները կը յափշտակեն : Եթէ յաջողին ոչխարի փարախ մը մտնել, բոլորը մէկ կը խեղդեն, սակայն հազուադէպ է նման պարագայ : Փարախները լաւ հսկուած կ'ըլլան ձմրան :

Կիւրիինի բնակիչները առհասարակ որոգայթով կ'որսան զանոնք :

Ազուլտը դոց դեղին, ոսկեգոյն մորթ ունի : Ան կարեւոր որս նկատուած է, քիշեր կ'որսան զանոնք : Կ'ապրին քաղաքէն դուրս, ապառաժուտ վայրերու քարայրներու մէջ են անոնց ողջերը :

Առատ է նապաստակը : Ասոնք կը տարբերին ճագարէն եւ աւելի խոշոր են : Թուրքերը միայն՝ ձմեռ ատեն անոնց որսորդութեամբ կը պարապին եւ այդ նպատակով հարուստ թուրքեր բարակներ կը պահեն եւ միայն թուրքերը կ'ուտեն անոնց միսը :

Վնաս տուող վայրի կենդանիներէն մին կռագն է. հաւու սիրահար են, այնքան ճիւղն, որ փոքրիկ ծակէ մը ներս կը մտնեն : Եթէ յաջողին հաւոցը մտնել՝ հատ մը ողջ չեն թողուր, նոյնիսկ թառերու վրայ ելլելով՝ ամէնը կը

խեղդեն: Կուզին մորթը շատ յարգի է: Կան մարդիկ, որ անոր որսորդութեամբ կը պարապին, որոգայթ լարելով միայն:

Կիւրինի Շուղուլ թաղին ծովու ապառաժներուն մօտ կան սկիւռներ, ուր ընկոյզի ծառեր առատ են: Ասոնց մորթը թխադոյն է:

Հակառակ Կիւրինի գետին պզտիկ ըլլալուն՝ անոր լճացած եւ ծառերով եզերուած տեղերու մէջ կան ջրշուներ: Ձանոնք կ'որսան որոգայթով, թանկագին մորթ ունենալուն համար: Կիւրինի մէջ առնէտ դոյուլիւն չունի, ոչ ալ մլուկ եւ փայտոչիլ:

Ամէն տեսակ թունաւոր օձեր առատ են Կիւրինի շուրջը: Մայր եկեղեցին շրջապատող աւերակներու մէջ կը վխտան: Ասոնք շատ անգամ կը կախուէին եկեղեցիի քիւէն, ուր ծիծեռնակներն իրենց բոյներն ունէին եւ անոնց ձագերով կը կերակրուէին:

Անջատ եւ ընդարձակ պարտէզներու մէջ շինուած տուներէ կը բաղկանայ քաղաքը, եւ մէկ երկու մղոն քաղաքէն դուրս տարածութիւնը կ'երկարի, ուր երամներով իրենց բնակավայր ընտրած են կախաւները, իւրաքանչիւրը վառեակի մը մեծութեամբ, գերուկ ու սիգածեմ: Երկու տեսակ են անոնք՝ մէկը կարմրորակ, միւսը՝ չէկ ոտքերով: Կարմիր ոտքերովները շուտ կ'ընտելանան: Քանի մը ամիս վանդակին մէջ մնալէ ետք, այլեւս չեն հեռանար անկէ, նոյնիսկ երբ ազատ արձակուին անոնք իրիկուան վանդակը կը վերադառնան: Արշալոյսին՝ անոնք իրենց յատուկ ներդաշնակ կարկաչներով՝ կ'ողջունեն բացուող լոյսը: Սքանչելի համեղ միս ունին, ինչպէս նաեւ համով հաւկիթներ:

Շէկ ոտքերով կաքաւները բնաւ չեն ընտելանար վանդակին, կը նախընտրեն սովամահ ըլլալ, քան թէ բանտարկուիլ: Ձմրան՝ երբ ձիւնը մէկերկու ոտք թանձրութեամբ գետինը կը ծածկէ՝ կարելի է զանոնք նոյնիսկ ողջ բռնել, որովհետեւ աղաւնիի կամ ուրիշ նոյնանման թռչուններու պէս չեն կրնար արագ թռչիլ:

Առատ է հաւքուլը, իսկ տարմանեաւերը թուրի սիրահար, երբեմն կ'ըլլան խմբով քանի մը հարիւրի հասնող՝ եւ մեծ վնաս կը հասցնեն պտուղներուն:

Կոցարը եւ վայրի հաւը համբաւաւոր են իրենց չափազանց համեղ միսերով:

Գիշատիչ թռչուններէն նշանաւոր է արծիւը, որ իր բոյնը կը շինէ անմատչելի ապառաժներու զագաթին, կը յարձակի դառնուկներու, նապաստակներու եւ մանր վայրի կենդանիներու վրայ:

Բազէն աղմկայոյզ եւ յանդուզն թռչուն մըն է, որուն սիրելի որսերը հաւուն մանր ձագերը եւ պզտիկ թռչուններն են: Ուրաւը՝ գիշտիկ թռչուններու ամենէն որկրամոլն է, հազիւ դիակ մը տեսած բացօդեայ տեղերու վրայ կը յարձակի: Ասոնց կ'ընկերակցի աղուէսաբարոյ ագուարը, որ բոլորովին կը զանազանուի ուրիշ շրջաններու աղուաներէն, թէ՛ իր մեծութեամբ եւ թէ՛ իր դորշ դոյնով, ան չափազանց խորամանկ է եւ դժուար է զայն որսալ: Հրացանակիր մարդիկը որոշելու չափ վարպետ է. հաւու ձագեր, օճառ եւ կերացանակիր մարդիկը որոշելու չափ վարպետ է. հաւու ձագեր, օճառ եւ կերացանակիր վերաբերեալ որեւէ բան գողնալէ զատ՝ սիրահար է ընկոյզի: Գիտէ անոր հասունալու ժամանակը եւ որովհետեւ անկարող է իր կտուցովը կտորել զայն՝ իր մագիլներուն մէջ առփօ վեր կը բարձրանայ եւ քարքարուտ տեղերու եւ ապառաժներու վրայ թռելով վար կը ձգէ ու կայծակի արագութեամբ իջնե-

լով՝ կոտորուած ընկոյզի միջուկը կ'ուտէ : Ագռաւին միւսը չ'ուտուիր նաեւ կիւրինի մէջ :

Կայ նաեւ կաչաղակը, երկար պոչով, սեւ ու ճերմակ գոյնով դեղեցիկ թռչուն մը, որ եթէ բռնուի եւ ընտելանայ՝ խօսիլ սորվելու ընդունակ է :

Քանի մը տեսակ ծիծեռնակներ կան, որոնցմէ տմանք ամբողջ օրը՝ կարծես առանց դադար առնելու կը թռչին եւ իրենց ճոռոզումներով օդը կ'աղմկեն : Առհասարակ ասոնք իրենց բոյները տուններու քիւերուն տակը եւ կամ բարձր ապառաժներու խոռոչին մէջ կը շինեն : Իսկ միւս տեսակը՝ երկուքի բաժնուած բարակ պոչով, ջուրերու եզերքը կը դեղերի եւ իր բոյնը կաւէ կը շինէ :

Ճնճղուկը յաւիտենական դրացին է մարդկութեան, ուր որ հացահատիկ կայ՝ անոնք խմբովին անոր շուրջը կը խմբուին : Արտուտիկ, սարեակ, սոխակ, լորամարզ, արտերու եւ թուփերու մէջ իրենց բոյները կը շինեն ընդհանրապէս :

Կիւրինի ամենէն հետաքրքիր եւ խորհրդաւոր թռչունը Սահակն է : Խորհրդաւոր է, որովհետեւ որեւէ մէկը չէ կարողացած դայն տեսնել : Հազիւ գարնան ծառերը կը ծաղկին եւ օդը կը տաքնայ, արեւը մար մտնելէն եւ մուտքը կոխելէն անմիջապէս յետոյ, ան իր թաքստոցէն դուրս կու դայ եւ կը լսուի իր ողորջ ձայնը՝ սահահ, սահահ, սահահ եւ հինգ վեց վայրկեան դադարէ մը ետք՝ նոյն միանուադ յանկերդը կը կրկնուի : Շուղուլի ծովուն շեպէն սկսեալ մինչեւ Ձախ ձոր, կանոնաւոր երթեւեկութեամբ շրջան կ'ընէ մինչեւ արշալոյս, առանց դադարի, կարծես սահակի մը փնտռութիւն ելած ըլլայ : Լուսնալուն, ձայնը կը դադրի : Ո՞ր կ'երթայ, ո՞ր կը պահուի, ինչ մեծութիւն եւ ի՞նչ գոյն ունի՝ անհնար եղած է պարզել : Յայտնի է սակայն որ զաղթող թռչուն է, որովհետեւ ձմեռը իր ձայնը բնաւ չլսուիր :

Գարեգին Ֆախիկոպոս Սրուանցտեանց այդ թռչունի մասին կը խօսի իր հատորներէն մէկուն մէջ, եւ քաղաքէ մը առնուած ականգովէպ մըն ալ ունի :

## Զ.— ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### 1. Վախանեան ընկերութիւն, հիմնուած 1863-ին.

Կիւրինի այս հնագոյն ընկերութիւնը հիմնած են հալէպաբնակ կիւրինցի պանդուխտ վաճառականներ, 1863-ին, նպատակ ունենալով նպաստել Կիւրինի աղքատներուն ու ազգային վարժարաններուն : Ահա եօթը հիմնադիր անդամներուն անունները. Մարտիրոս Կ. Արապեան, Մ. Սարգիս Զիլինկերեան, Սենեքերիմ Թահմազեան, Մ. Մարզար Գոչունեան, Մարկոս Մակարեան, Մ. Յարութիւն Մարանեան, Պօղոս Արապեան, որոնցմէ իւրաքանչիւրը 50-ական ոսկի նուիրելով՝ ընկերութեան հիմնադիր հանդիսացած են, պայմանաւ որ ընկերութիւնը իրենց ձեռքով շահագործէ գոյացած դրամադրուիւր, որ քիչ ատենուան մէջ 500 ոսկիի բարձրացած է, ունենալով նաեւ ոչ հիմնադիր անդամներ :

Ընկերութեան եօթը հիմնադիր անդամները որոշած են որ իրենց կենդանութեան անձամբ վարեն ընկերութիւնը, իսկ իրենց մահէն վերջ՝ իրենց արու ժառանգորդները՝ յաջորդաբար եւ տարուէ տարի գոյացած շահը՝ քա-